Արձանագրություն N 2

**«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար «ԿՏԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/06» ծածկագրով գնանշման հարցումով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի**

ք.Երևան, Բունտնագյան 37, «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ

02.06.2020թ. ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արտակ Պողոսյանը, հանձնաժողովի անդամ՝ Արմեն Կուլախսզյանը և քարտուղար Լիլիթ Գևորգյանը:

## 1. Տեղեկություններ հայտերի բացման մասին

Հայտերը բացվել են հրավերի հրապարակվելու օրվան հաջորդող 7-րդ օրը, ժամը 11:00-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին: Հանձնաժողովի նախագահ Ա. Պողոսյանը հրապարակեց գնման առարկաների ընդհանուր (նախահաշվային) գները՝ մեկ թվով արտահայտված՝

| Չ/Հ | Անվանումը | Գինը<br>(ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Բազմաֆունկցիոնալ տպիչ | 550000 (հինգ հարյուր հիսուն հազար) |
| 2 | KVM փոխարկիչ | 35000 (երեսունհինգ հազար) |
| 3 | KVM փոխարկիչ սերվերի համար | 800000 (ութ հարյուր հազար) |

## 2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեների մասին

Հանձնաժողովի քարտուղար Լ. Գևորգյանը հայտարարեց, որ հայտ է ներկայացրել մեկ մասնակից և հանձնաժողովի նախագահ Ա.Պողոսյանին փոխանցեց հայտերի գրանցամատյանը, դրա անբաժանելի մասը հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտը.

*1/ «Յունիքոմփ» ՓԲԸ – ք. Երևան, Չարենցի 37, ք. Երևան, Սունդուկյան 12ա, հեռ. 010 58 11 11, էլ. փոստ info@unicomp.am*

3. **Տվյալներ բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին**

***«Յունիքոմփ» ՓԲԸ՝***

*ա/ հայտը պարունակող ծրարը կազմված և ներկայացված է սահմանված կարգին համապատասխան, -* ***բավարար***

*բ/ առկա են հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան –****բավարար***

*գ/ ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին -* ***բավարար***

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 2, դեմ – 0:*

4. **Մասնակիցների առաջարկած գները**

1. **«Յունիքոմփ» ՓԲԸ**

Չափաբաժին 3 – 786000 (յոթ հարյուր ութսունվեց հազար) ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ:

Գինն առանց ԱԱՀ՝ 655000 (վեց հարյուր հիսունհինգ հազար) ՀՀ դրամ:

**5. Մասնակիցների կողմից համապատասխան տեղ զբաղեցնելու վերաբերյալ**

Հանձնաժողովը որոշեց 3–րդ չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչել «Յունիքոմփ» ՓԲԸ–ին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 2, դեմ – 0:*

**6. Ընթացակարգը 1–ին և 2-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ**

Հանձնաժողովը որոշեց չկայացած հայտարարել ընթացակարգը՝ 1–ին և 2-րդ չափաբաժինների մասով, , քանի որ ոչ մի հայտ չի ներկայացվել(«Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ):

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 2, դեմ – 0*

## 7. Պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ

Հանձնաժողովի նախագահ Ա. Պողոսյանն առաջարկեց օրենքով սահմանված կարգով պայմանագիր կնքելու վերաբերյալ առաջարկ ներկայացնել՝ **«Յունիքոմփ» ՓԲԸ-ին** 3-րդ չափաբաժնով:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 2, դեմ – 0:*

Հանձնաժողովի նախագահ՝ ______________________ Ա. Պողոսյան

անդամներ՝ ______________________ Ա. Կուլախսզյան

քարտուղար՝ ______________________ Լ. Գևորգյան